№ 183 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 21 ՕԳՈՍՏՈՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 183 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 21 ՕԳՈՍՏՈՍԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴՐԻՉ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".

TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ռ8 ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՐՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակդրոշմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրներ՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂԵՎԵՆ ԱՆՇԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ՝ —20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Վիլնայում՝ Большая 32, Գարիկում՝ 8 Площадь Биржи

1913 թ.ի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպ. Հոգաբարձութիւնը

սրանով յայտարարում է, որ դպրոցում նորեկ աշակերտների համար ազատ տեղեր կան Գ. պատր., I, II, IV և V դասարաններում:

Դպրոց մտնել ցանկացողները պէտք է ներկայացնեն վերատեսչի անունով խնդիր՝ կցելով ծննդեան (իսկական և ոչ քաղաքագր), ծաղկի և ուսման վկայականները:

Գ. պատր. մտնել ցանկացողները պէտք է լինեն ոչ աւելի քան 12 տարեկան, I դաս. 13 տարեկան, II դաս. 14 տարեկան, IV դաս. 16 տարեկան և V դաս. 17 տարեկան:

Քննութիւնները և վերքննութիւնները կը սկսվեն օգոստոսի 24-ին:

(16,18,21,23) առ. 645. 4—3

ՊՐՕԳԻՄՆԱԶԻՈՆ Կ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ ՊՐՕԳԻՄՆԱԶԻՈՆՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ.

ԲԱՑՎՈՒՄ Է Միասեռ ուսուցում տղաների եւ աղջիկների: Վարժարանական դասընթացքներ՝ օգոստ. 27-ին եւ 28-ին: 3-ՐԴ ԴԱՍ.

Ընդունելութիւնը այբբենական, ստորին և բարձր պատրաստականները, 1-ին և 2-րդ դասարանները օգոստոսի 31-ից, առաւօտեան ժամը 9-ից:

ՍԵՐԳԷՎԱԿՆԱՅԱ ՓՈՂ. ՍԵՓ. ՏՈՒՆ 20. (18,21,24,27,29,31ս. 1) 634. 8—3

ՔԱՄՈՅԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԵՐԿԴԱՍԵԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Նորեկ աշակերտուհիների ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ և ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ սկսվելու են օգոստոսի 26-ից:

Ազատ տեղեր կան I, III, IV, V և VI բաժանմունքներում. Դպրոցը գտնվում է նախկին ընակարանում՝ Բրոսսէ տուպիկ № 8. (Броссе тупикъ № 8).

առ. (օ. մ.) 666. 3—1

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ՏԻԿ. ԵՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

БЕБУТОВСКАЯ УЛ. № 5.

(18-երորդ տարի)

Ընդունելութիւնը օգոստոսի 25-ից, պարապմունքը սեպտեմբերի 2-ից:

Գիշերօթիկներ սահմանափակ թիւով:

(24, 29 ս. 1,3) առ. 660 5—1

ՍԱՐՈՒԽԱՆՕՎՕ-ԿՈՒՐԻՆԱԿԻ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Սրանով յայտարարում է, որ այս 1913 թ.ի օգոստոսի 31-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Բագու քաղաքում ընկերութեան վարչութեան գրասենեակում (Մօլոկանսկայա փող., տուն № 4) կը կատարվի մրցութիւն՝ Շուշի-Եւլախ երկաթուղու շինութեան քարէ կամուրջների և խողովակների գործերը կապալով տալու համար:

Մրցութեան մէջ մտանակցել ցանկացողները պարտաւոր են մինչև վերոյիշեալ ժամանակը գրաւոր յայտարարութիւն ներկայացնել վարչութեան, իրանց առաջարկութիւններով հանդերձ:

Կամուրջների և խողովակների տեսակների յատակագծերը, նրանց տեղեկատուն գործի քանակութեան չափի ցուցմունքով, տեխնիկական և ընդհանուր պայմանները, պայմանագրի նախագիծը և գործերի նմոյնկլատուրան (ուրուագիծ առանց արժէքները նշանակելու) կարելի է տեսնել վարչութեանս տեխնիկական բաժանմունքում ամեն օր առաւօտեան ժ. 12—2-ը, բացի կիրակի և տօն օրերից:

Վարչութեանս համար ամենաձեռնտու պայմաններ առաջարկողները պայմանաւորվելու դէպքում պարտաւոր են ներկայացնել առաջարկված գործի ընդհանուր գումարի 7 տոկոսը, իբրև գրաւական:

Քարը գործի տեղը հասցնելու համար ժամանակ է տրվում մինչև փետրվարի 1-ը, իսկ գործերը վերջնականապէս վերջացնելու ժամանակը որոշվում է մինչև յուլիսի 1-ը 1914 թ.:

առ. (21) 649. 2—2

Առաջնակարգ մեծ ցիրկ ԵՂԲ. ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ

Միքայէլեան փողոց, Մուշտայիդ այգու մուտքի մօտ, սեփ. ամարային շինութիւն:

ԱՑՍՕՐ, չորեքշաբթի, օգոստոսի 21-ին ՄՕՆՍՏՐ-ներկայացում ամբողջ առաջնակարգ խմբի մասնակցութեամբ 18 աչքի ընկնող գործողութիւններով: Այսօր 4 ՍԱՏԱՆԱՆ կը կատարեն կրկին նոր ձեւեր ցիրկի գմբէթի տակ: ԱՑՍՕՐ միակ ջիգիտ ԹԱՄԱՐԱՑԻ և նրա մրցակից Ժան Լէվսի առաջին գատարօն է, որոնք դուրս կը գան երկու նոյնդներ հեծած: ԱՑՍՕՐ Բրօկարսը ցոյց կը տայ նշանաւոր մարդկանց տիպեր արագ զգեստափոխութեամբ: ԱՑՍՕՐ հանդէս են գալու յայտնի Էլլան և Կարպին 15 արշին սանդուղի վրա: ԱՑՍՕՐ ամբողջ ցիրկը կը պտտէ ոտն ի վեր գլխով Նիկոլինին: ԱՑՍՕՐ Բակսօ գեղեցկուհի քոյրերը հանդէս կը բերեն իրանց մարզված շներին: ԱՑՍՕՐ նոյնպէս մասնակցում են սիրելի կատակախօսներ եղբ. Վինչենցօ և ժող. ծաղրածու Բօբէրտսը իր ամենախելօք իշուկի և մաթեմատիկոս շան հետ:

664. 1—1

ՀԱՒԼԱԲԱՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

(Ամարային շինութիւն, Միքայէլեան պր. № 65, բժ. Կարապետեանի այգի)

Այսօր, չորեքշաբթի, օգոստոսի 21-ին

Տեղի կունենայ

ՏԵՂԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Կը նուագէ յայտնի դուդուկիստներ ԲԱԳՐԱՏ-ԳԷՎԼՕՅԻ, ԶՈՒԲԻՎԻ և ՆԱԶԱՆՅԻ միացեալ խումբը

Բացի խրեղից, որ կը կատարեն երեքը միասին, ամեն մէկը առանձին էլ հանդէս կը գայ solo. վերջում արեւելեան պարեր բեմի վրա:

Համերգի սկիզբն է ուղիղ ժ. 9-ին երեկ. Մուտքը անդամների, կանդիդատների և նրանց ընտանիքների համար 20ական կոպ. հիւրերի համար՝ կանոնցից 50 կ., աղամարդկանցից 1 ր.

Դպրոց-Պանսիօն ԱՐԻԱԳԵԱՆԻ

Երկսեռ երեխաների ընդունելութիւն վեց տարեկան հասակից օգոստոսի 25-ից: Ընդունվում են նաև լիակատար գիշերօթիկ երեխաներ:

Սօլօլակ, Բէհբութեան փ. տ. № 38, բակում, վերին յարկ:

(21,30,6 սեպ.) առ. 625. 3—1

ԲԺԻՇԿ

ԾՈՒՅՑԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ

Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:

Հասցէն՝ Ռտիշչէվսկայա № 1.

առ. (ե.հ.կ.) 4. 100—91

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՄՈՒՇՈՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՈՒՐԵՐԸ

I

Բիթլիս, 3 օգոստ.

Առջի օր տեղէս Մուշ մեկնեցաւ Երզրումի և միւնոյն ժամանակ Վանի, Բիթլիսի, Դիարբէքիրի և Խարբերդի անգլիական ընդհանուր հիւպատոս պ. Մոնման թիստ դժգոհ և վիրաւորուած հայերէն և նամանաւանդ առաջնորդ Սուրէն վարդապետէն, որ չէր զլխած (?) փոխարինել այցելութիւնը: Նոյնօրինակ ընթացքի հետեւած էր նաև Սուրէն վարդապետը երկու շաբաթ առաջ ասկից Վան մեկնող Մուսուլի գերմանական հիւպատոսին հանդէպ:

Սուրէն վարդապետը չի կրնար ինքզինքը արդարացնել իր այդ անքաղաքավար ու բիրտ ընթացքէն, ուսկից կը տուժէ իրմէ աւելի՝ հայ ազգը, որուն ներկայացուցիչներէն է դժբաղդաբար: Երբէ՛ կայ պարագայ մը ստուգիւ, ուսկից հայը զոհ մնացեր է թիւրք սահմանադրութենէն, այն միակ առաւելութիւնն է, որով ամեն ոք Թիւրքիայի մէջ կրնայ, առանց օրինական դժուարութեան, ուզած տեղը երթալ, ուզած մարդուն այցելել: Ես հոս՝ ոչ թէ միայն այս անգամ, այլ ուրիշ շատ անգամներ ալ Սուրէն վարդապետը գտած եմ այնպիսի անքաղաքավարութեանց ու տհաստութեան մէջ, զորս չէ նկատուած իսկ քանի մը օր առաջ հրաժարեալ պատրիարք Արշարունիի քովը:

Ես և ինչպէս ուրիշները պիտի չվշտանայինք այնչափ, եթէ այդ անձերը չբլլային սահմանադրականօրէն ընտրուած այն հայ ազգին կողմանէ, որուն մտաւորականները կը նկրտին այսօր ահագին զոհողութիւններով ու յեղափոխութիւններով ցուցնելու Եւրոպացւոց թէ՝ հայ ազգը քաղաքակիրթ, հասուն, գրականութեամբ ու լեզուով հարուստ ըլլալով՝ արժանի է վայելելու այն ամեն իրաւունքները, զորս ունին Եւրոպայի քաղաքակիրթ ազգերն ու պետութիւնները: Այդ արարածները չէ՞ն գիտեր, թէ Անգլիոյ արտաքին գործոց մինիստրին՝ մըստր Գրէյի—որուն դիմած են Պոլսոյ փաշան և իր ընկերները—տրամադրութիւնները դէպի հայերը նպաստաւոր կամ աննպաստ շինողները՝ նախ գրեթէ ամբողջ Հայաստանին անգլիական ընդհ. հիւպատոսին, և ապա Կ. Պոլսոյ դեսպանին տեղագրերն են: Իսկ եթէ չեն գիտեր, ինչու ազգին ներկայացուցիչներ, պատրիարք ու առաջնորդ եղած են, և ինչ երեսով կաթողիկոս և եպիսկոպոս ըլլալու պահանջը կընեն:

Ես չեմ կրնար ատոնց այդ յոռի վերաբերումը վերագրել իրենց անգիտութեան, այլ համոզուած եմ թէ անոնք ազգավնաս դիտումներ ունին: Ինչու ասոնք, երբ իրենց թիւրք նաղբը մը կամ հասարակ պաշտօնեայ մը կայցելէ, մինչև դուռը կընդունին, հազարումէկ քծինքներ ու ստորնութիւններ կընեն, անոնց մէկ այցելութիւնը հինգ անգամ կը փոխարինեն, իսկ Պոլսոյ մէջ եւրոպական դեսպան մը անվարագոյր և աղտոտ սենեկի մը մէջ կընդունին, Անգլիոյ դեսպանը նամակով համբուռ կը դնեն, հոս՝ Անգլիոյ ընդհ. հիւպատոսի մը այցելութիւնը չեն փոխարիներ և այն և այնտ Թերևս ուրիշ տեղերու առաջնորդներն ալ միւնոյն ընթացքներու մէջ գտնուեր են մեծ պետութեանց ներկայացուցիչներուն հանդէպ: Պատրիարքարանը պէտք է ամեն բանէ առաջ որոշ կանոնագիր մը ունենայ ի ձեռին՝ պատրիարքներուն և դեսպաններուն, հիւպատոսներուն և առաջնորդներուն միջև մշակելի յարաբերութեանց և փոխադարձ այցելութեանց ձեւերուն և պայմաններուն մասին: Պէտք է որ Արմաշի և ուրիշ հայ կղերականներու մէջ—ուր կը պատրաստուին մեր առաջնորդացուները—քանի մը պարապութիւններու տեղ քաղաքավարութիւն և արդի քաղաքակիրթ ազգաց սովորութիւններու, բարուց և յարաբերութիւններու մասին մասնաւոր դասաւանդութիւններ ըլլային:

Եւրոպական պետութիւնները մեր երկրին ու ազգին աւելի կարևորութիւն կուտան, քան մեր պատրիարքներն ու մենք. անոնք առհասարակ Հայաստանի մէջ իրենց կարողագոյն հիւպատոսները կը զրկեն, իսկ մեր պատրիարքարանը ընդհակառակը մեր խելացի առաջնորդները Գաղատիոյ, Կեսարիոյ պէս անկարևոր տեղուանքը կը զրկէ և Հայաստանի մէջ, ուր ժողովուրդը տգէտ ու աղքատ և խնդիրները աւելի քաղաքական ըլլալով՝ զգացուած պէտքին հակառակ՝ անուններ և մօրուսաւոր տղայ առաջնորդներ կը վերուբերէ, որոնք յատնի կեռասով մնասակար ու անպատեհաբար կը դառնան թէ երկրին և թէ ազգութեան: Բիթլիսի առաջնորդը որ թէև ոչ-դաշնակցական է, բայց իր գործերովը կը ցուցնէ, թէ ինքը խարբերդցութիւնը՝ վարչագիտութիւն, համակերպութիւնը՝ խելացութիւն, անքաղաքավարութիւնը՝ մեծութիւն և անգործութիւնը՝ հաճոյք կը սեպէ:

Պոլսոյ հայութիւնը շնորհիւ իր մատուռականներուն սրբագրեց իր սխալը՝ հրաժարեցնելով Արշարունին. գաւառացիները զուրկ լինելով գլխի տէր լուրջ զարգացեալներէ՝ բան մը պիտի չկրնան ընել: Նոր պատրիարքին վրայ կը ծանրանայ ուրեմն Հայաստանի անկարող առաջնորդները փոխելու և լաւագոյնները կարգելու պարտականութիւնը: Ցաւերով ծնած, ապրած ու մեծցած այս երկիրներու համար խելացի, քիչ շատ քաղաքագէտ և անձնուէր զեկավարներու պէտք կայ: Ընտրելէ ու զբաղեցնել առաջ պէտք է գիտնան ցաւերը:

Մշեցի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՆԱՏՕԼՈՒԻ ՄԷՋ ԳՐԳՌՈՒԹԻՒՆՆԵՐ

«Թանին» մէջ կը կարդանք. «Բէգրխանի Աբդիւրրէզաք, որ Խոյ (օսմ. սահմանագլուխին վրայ պարսկական քաղաք) կը ընակի և որուն հետեւած ընթացքին համար քիւրդերը զայն Աբդ-իւլ-Բազաք կը կոչեն, կարգ մը պատրաստութիւններ կը տեսնէր, Արեւելեան Անատօլուի մէջ յեղափոխութիւն առաջ բերելու համար: Աբդիւրրէզաք այս նպատակով յաջողած էր իր կողը շահիլ Խայրէդդին Բիրազի անուն անձ մը, որ ոստիկան զինուորներու նախկին հարիւրապետ մըն է և իր պաշտօնավարութեան մէջ խեղճ ժողովրդեան վրայ գործած հարստահարութիւններով և կաշառակերութեամբ հռչակաւոր: Այդ անձն և Հիւսէյին ու Սէլիմ անուն երկու ընկերները օսմ. սահմանագլուխէն ներս զրկուած էին: Ասոնք՝ կարգ մը յայտագիրներով և հրահանգներով Աբդիւրրէզաքի միջնորդութեամբ սահմանագլուխն անցան և Մալազկերտի կողմերը հասան, բայց կառավարութիւնը արթուն կը հսկէր և պատրաստուող խռովարարութեան տեղեակ էր, որով սկսաւ խստիւ հալածել խռովարարութեան պետերը: Հիւսէյին ու Սէլիմ, տեսնելով որ կառավարութեան ձեռքէն պիտի չկրնան ազատիլ և երբ ձերբակալուին՝ կախաղան պիտի ելլեն, սկսան մտածել. իրենց պէտք՝ Խայրէդդինը սպաննեցին, կառավարութեան անձնատուր եղան և իրողութիւնը ամբողջովին պատմեցին: Ոստիկաններու հետ գացին Խայրէդդինի դիակին գտնուած տեղը. անոր վրան գտնուած յայտագիրները և այլն ձեռք անցուցեցան: Կառավարութիւնը իր աչալրջութեամբը կրցաւ իր սաղմային վիճակին մէջ փճացնել այն խռովութիւնը, զոր Աբդիւրրէզաք, իր վարած ընդարձակ աշակցութեամբը, այնքան խնամով պատրաստած էր»: («Բիւզ.»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17, 18 և 19 օգոստոսի

Նովօչերկասկ. — Երէկ, երեկոյեան ժամը 9-ին, Բոգայեվսկայա ստանիցային մօտիկ կողոպտված է Դոնից անցնող «Պեսոր» շոգենաւը: Շոգենաւի վրա գտնվող աւազակախումբը հանգցրեց ճրագը, ահարեկեց նաւի ծառայողներին ու ուղևորներին, վիրաւորեց նաւապետի օգնական Միտրօպոլսկիին, կապոտեց և շոգենաւի մակոյկի մէջ դրեց նաւապետին և, յափշտակելով 78,000 ռուբլի, փախաւ մակոյկով, տանելով իր հետ նաև նաւապետին: Զերկասսկի շրջանային ատամանը կոզակներով հետապնդում է կողոպտիչներին:

—

Նովօչերկասկ.—Կալանաւորված են «Պեսոր» շոգենաւի վրա գործված յարձակմանը մասնակցող 4 կողոպտիչները: Նրանց մօտ գտել են 20,000 ռուբլի: Հետապնդումը շարունակվում է: Կալանաւորվածները բոլորն էլ վրացիներ են: Նաւապետի վիրաւորված օգնականը վախճանվեց:

—

Նովօչերկասկ.— Քաղաքի մօտիկ կալանաւորված է «Պեսոր» շոգենաւը կողոպտող ամբողջ աւազակախումբը: Գտել են մօտ 65,000 ռուբլի:

—

Օդեսսա.— Խերսոնում պատահած խօլերային հիւանդացման դէպքերը նկատի առնելով՝ քաղաքապետը միջնորդում է ներքին գործերի մինիստրի առաջ՝ Օդեսսան խօլերայի կողմից վտանգաւոր յայտարարելու համար: Օդեսսայից եկող ուղևորներն ու ծանրոցները ենթարկվում են բժշկական դիտողութեան:

—

Սեւ.—Բաթումեռ ձիաքարշերի երկրորդ համառուսական համագումարը և առաջին համագումարը փոխադարձ ապահովագրութեան ընկերութիւնների ու հաստատութիւնների:

—

Պետերբուրգ. — Թաւրիզի գլխաւոր հիւպատոս Միլլերը նշանակվում է Մօնգոլիայի գլխաւոր հիւպատոս:

—

Լոնդոն.—Գործադուլի առիթով լուրջ անկարգութիւններ ծագեցին Դուբլինում: Ոստիկանութիւնը գրոհ տուեց հաղարաւոր գործադուլարար ամբոխի վրա, վերջիններս դիմաւորեցին ոստիկանութեանը քարերի տարափով: Մեծ թիւով վիրաւորվածներ կան:

—

Դուբլին.—Անկարգութիւնների միջոցին վնասվեց 200 հոգի. մասնաւոր անձերից, և 30 ոստիկաններ: Մէկը վախճանվել է հիւանդանոցում:

—

Դուբլին.— Հիւանդանոցներում տեղաւորված են օգոստոսի 18-ի անկարգութիւնների միջոցին վիրաւորվածներից 400 հոգի: Մէկը վախճանվել է: Դուբլինիլօրդմերը յանձնարարել է փաստաբանների կօրպօրացիային՝ քննութիւն կատարել ոստիկանութեան գործելակերպի մասին:

—

Նիւ-Յորկ.—Մեքսիկայից հեռագրում են, որ տեղական 3 բանկեր համաձայնվել են տալ կառավարութեան 12 միլիոն փոխառութիւն:

—

Թէհրան.—Կաբինէտը վճռեց վերջ տալ Սալար-ուդ-Դովլէի գործին: Կառավարութիւնը պատրաստ է կենսաթոշակ նշանակել 15,000 ռուբլի վերադարձնել յարքունիս գրաւված կալուածքները, այն պայմանով, որ բ. քայսղնը գնայ Եւրոպա: Արքայազնս արժանահաւատ աղբիւրների ասելով, հիւանդ է թոքախտով:

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ Գործ.)

17, 18 և 19 օգոստոսի

Տոկիո.—Քաղաքական գործիչ Տակէկօխին Սէյիւկայ կլուբի անունից մամուլի միջոցով դրում է ցամաքային զօրքը ուժեղացնելու դէմ: Եապոնիան ապահովված է Ռուսաստանի յարձակման դէմ և պահպանելով նրա հետ կապած համաձայնութիւնը՝ կարող է

ազատ կերպով զարգացնել երկրի արտադրական ոյժերը։

—

Տոկիո.—Հիւսիսային զօրքերի աջողութիւնը և Սունեատսէնի ու Խուանեասինի փախուստը փոխեցին մամուլի բացասական վերաբերմունքը դէպի Իւանշիկայը, և նա այժմ խորհուրդ է տալիս ֆինանսական օգնութիւն հասցնել Իւանշիկային։

Զօրքի աւելացնելու կողմնակիցները ապացուցանում են, որ ընդհարման դէպքում առաւելութիւնը եապօնական նաւատորմի կողմն է, ուստի Եապոնիային աւելի անհրաժեշտ է ուժեղ զօրք, քան նաւատորմ։

—

Շանխայ.—Նանկինը վերցրին առաւօտեան։ Ապստամբները դուրս փախան հարաւային դարպասներից։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17, 18 և 19 օգոստոսի

Սոֆիա.—Մօնասթիրի և Սկոլսկիի շրջանների բոլգարական այն ուսուցիչները, որոնց արտաքսել է սերբ իշխանութիւնը Մակեդոնիայից, յուշագիր են ներկայացրել մեծ պետութիւններին, բողոքելով և կոչ անելով կուլտուրական Եւրոպային՝ վերջ տալու մակեդոնական բոլգարների դէմ սկսված հալածանքներին։

—

Սոֆիա.—Մակեդոնացի փախստականների ժողովը Կիւստէնդիլում՝ որոշեց դիմել Եւրոպային, մանաւանդ Ռուսաստանին, խնդրելով ապահովել բոլգարների եկեղեցական և դպրոցական ինքնավարութիւնը Մակեդոնիայում։

—

Բուդապեշտ.—Դուբացցոյից հաղորդում են «Բուդապեշտի-Հիրլապին», որ ալբանական այժմվայ պարագլուխների մի մասը որոշ չափով անվստահութիւն է տածում դէպի Աւստրո-Ունգարիան։ Իտալական գործակալները գրգռում են ժողովուրդը միապետութեան դէմ։ Ալբանական կառավարութեան անդամներից մէկի արած ցուցմունքին, թէ Ալբանիայի շահերը պահանջում են անպայման ենթարկվել Աւստրո-Ունգարիային, Իզմայիլ Քեմալը պատասխանել է, որ Ալբանիայի շահերը տարբեր են աւստրո-ունգարականից և որ Աւստրո-Ունգարիան ստիպված պիտի լինի կռիվ մղել մի գրութեան դէմ, որին նա չէր պատասխանում։

—

Վիէննա.—«Ալբանիշէ Կօր.»-ը հաղորդում է մալիսսօրների և չերնոգորցիների միջև տեղի ունեցած նոր ընդհարումների մասին։ Նրբ վերջիններս փորձ արին գրաւել իրենց թողնված ալբանական շրջանները, խօթի, գրուդի, կլէմենտի և կաստրատի ցեղերը յետ մղեցին նրանց։ Ընդհանուր կարծիքն այն է Սկիւտարում, որ յիշեալ շրջանները Չերնոգորիան միացնել կարող է նոր պատերազմի միջոցով միայն։

—

Կ. Պոլիս.—Պաշտօնական «Թանինը» հաղորդում է, որ Ֆրանսիական ֆինանսական շրջանները Ֆրանսիայի և Թիւրքիայի միջև տիրող բարեկամական յարաբերութիւնների ապրելութեան տակ՝ Թիւրքիայի համար նպաստաւոր դիրք են բռնել, ուստի օսմանեան փոխառութիւնը Ֆրանսիան կաջողեցնի բալկանեան միւս պետութիւնների փոխառութիւնից աւելի շուտ։ Լրագիրը ասում է, որ մեծ պետութիւններից մի քանիսի ներկայացուցիչները Սոֆիայում, որոնց թւում նոյն Ռուսաստանի ներկայացուցիչը, կատէգորիկ կերպով յայտնեցին բոլգարական կառավարութեանը, որ Ռուսաստանը չի փորձի ստիպել Թիւրքիային մաքրելու Ադրիանուպոլիսը։ Ռուսական դիպլոմատիայի գործելակերպի մէջ այդ տեսակ յեղաշրջում առաջ գալը, «Թանինի» կարծիքով, կատարվեց Ֆրանսիական քաղաքականութեան ազդեցութեան ներքոյ։

—

Հռոմ.—Բոլգարական դեսպանը յայտնեց թղթակցին, որ իրան յայտնի չէ, թէ Բոլգարիան դիմել է Իտալիային՝ խնդրելով միջնորդ լինել Թիւրքիայի հետ բանակցութիւններ վարելիս։ Կրիզիսը աւելի շուտ կարող է լուծվել անմիջական բանակցութիւնների, քան միջնորդի միջոցով։ Իտալական դիպլոմատիական շրջանները նոյնպէս չափից դուրս զգուշաբար են վերաբերվում միջնորդութեան խնդրին։

Վիէննա.—Սալոնիկից օգոստ. 13-ին Բուդապեշտի վրայով Վիէննա եկած մի վաճառականի գտել են հիւանդացած խօլերայի թեթև տեսակով։

Սալոնիկ.—«Լիբերտէ» իր առաջնորդող յօդուածում միջազգային յանձնաժողովի գալստեան առիթով գրում է. «Ցունաստանը ոչ մի ժամանակ դէմ չէ եղել կատարված անգթութիւնների մասին քննութիւն կատարելուն, այն պայմանով, որ այդ քննութիւնը կատարվի անյապաղ ու անաչառ անձանց միջոցով։ Այժմ քննութիւնը ուշացել է, անհրաժեշտ տարրերը բացակայում են, դիակները թաղված են, վէրքերը բուժված, բռնութիւնների հետքերը այլևս չը կան, վկաները դէս ու դէն են փախել։ Յանձնաժողովը նոյնպէս անաչառ չէ, մանաւանդ Միլիւկովը, մեծ Բոլգարիայի համար մարտնչողն ու բոլգարասէրը»։ Լրագիրը հաւատացած է, որ կառավարութիւնը կը գործէ սերբիականի հետ համերաշխ և աջակցութիւն ցոյց չի տայ յանձնաժողովին։

—

Սալոնիկ.—Ցունական կառավարութիւնը հրաժարվում է ընդունել Կարնեգիի միջազգային յանձնաժողովի տեղեկութիւնները, ի նկատի առնելով որ նրա կազմի մէջն է բոլգարասէր Միլիւկովը։

—

Աթէնք.—Արքայական զոյգը ուղղակի մեկնեց Գերմանիա։ Թագաւորը շտապեցրեց իր գնալը, որպէս զի ներկայ լինի գերմանական մեծ մանեւրներին։

—

Աթէնք.—Արքայական զոյգը մեկնեց Եւրոպա։ Թագաւորը կը կառավարէ երկրից բացակայելուց յետոյ ևս։

Կառավարութիւնը պահանջեց հեռացնել միջազգային յանձնաժողովի կազմից Միլիւկովին։ Յանձնաժողովը յայտնեց, որ ինքը համերաշխ է Միլիւկովի հետ։

—

Աթէնք.—Մինիստրների խորհուրդը Բոլգարիայի խնդրանքը վճռեց շարունակել Դէդէաղաջի գրաւումը, մինչև որ Բոլգարիան զօրքեր և պաշտօնեաներ կուղարկի այնտեղ։

—

Բելգրադ.—Հերքվում է մինիստրական կրիզիսի մասին տարածված լուրը։ Պաշէչը աշխատութեամբ դնում է արտաքսման։

ԹԻՒՐՔ-ԲՈԼԳԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17, 18 և 19 օգոստոսի

Սոֆիա.—Մամուլը բազմակողմանի քննութեան է ենթարկում Թրակիայի առիթով Թիւրքիայի հետ ուղղակի բանակցութիւններ վարելու հնարաւորութեան հարցը։ Լրագիրները մատնանշում են այդպիսի բանակցութիւնների վտանգաւորութիւնը և անխուսափելիութիւնը շատ խոշոր զիջումների յօգուտ Թիւրքիայի, եթէ պետութիւնները չեռաշխատորեն Բոլգարիային գոնէ Ադրիանուպոլիսին տիրանալու։

—

Վիէննա.—«Նէյէ-Ֆրէյէ-Պրէսսէին» հեռագրում են Սոֆիայից, որ մինիստրների խորհուրդը որոշեց անմիջական բանակցութիւններ սկսել Թիւրքիայի հետ։ Բոլգարական լիազօրները մօտ օրերս կուղևորվին Պոլիս։

—

Սոֆիա.—Բոլգարական կառավարութիւնը այսօր վճռեց անմիջական բանակցութիւն սկսել Դրան հետ։ պատուիրակները անյապաղ կը նշանակվեն։

Զինուորական մինիստրը հրամայեց համախմբել Սոֆիայում սերբ զինուորական գերիներին։ Գերիները մօտիկ ապագայում ուղարկվելու են Ցարիբրոդ՝ յանձնելու սերբ իշխանութեանը, փոխելով բոլգար զինուորական գերիների հետ։

—

Լոնդոն.—«Տայմսին» հեռագրում են Սոֆիայից, որ մինիստրների խորհրդի որոշումը՝ Բ. Դրան հետ բանակցութիւններ սկսելու մասին՝ ընդունված է շնորհիւ այն հանգամանքի, որ ուրիշ կերպով անկարելի է թիւրքական զօրքերի արշաւանքի առաջն առնել։

—

Կ. Պոլիս.—Թիւրքիան Բոլգարիայի հետ բանակցութիւններ վարելիս առաջարկում է որոշ փոփոխութիւններ մտցնել սահմանի մէջ Կըրք-Քիլիսէյի մօտիկ, զիջում է Մուստաֆա-փաշան և առաջարկում է առևտրական խոշոր օգուտներ։ Թիւրքական մամուլը սպառնում է բոլգարներին ժամանակաւորապէս գրաւել զանազան տեղեր, եթէ բոլգարները չընդունեն թիւրքական տեսակէտը, և միաբերան յայտնում է, որ Ադրիանուպոլիսը վերջնականապէս մնում է Թիւրքերի ձեռքում։ Թիւրքական շրջաններում խօսում են, որ բոլգարները առաջարկել են թիւրք-բոլգարական դաշնակցութիւն կազմել, բայց Թիւրքիան մերժելով դաշնակցութիւնը՝ առաջարկել է որոշ համաձայնութիւններ այն դէպքում, եթէ Բոլգարիան ընդունի թիւրքական պահանջները։ «Միութիւն և Առաջադիմութիւն» կոմիտէի թերթերը առաջարկում են իբրև ամենաճշգրիտ միջոց ճնշում գործ դնել Բոլգարիայի վրա՝ Դիմիտրիչինայի, Դէդէաղաջի և ամբողջ Եգէյեան ծովափի գրաւումով։

—

Աթէնք.—Ցունաստանի և Թիւրքիայի միջև բանակցութիւնները վերջնական խաղաղութեան դաշնագիրը կնքելու մասին առաջ են տարվում եռանդով։ Դաշնագիրը հաւանօրէն կը ստորագրվի մօտ օրերս։

Ցունական առևտրական նաւատորմիղը աւելացվում է անգլիական նաւաշինարաններում պատուիրված տասը մեծ շոգենաւերով։

—

Լոնդոն. — «Վեստմինստէր-Գազէտը» խորհուրդ է տալիս Թիւրքիային կօրբէկա և զիջող լինել Բոլգարիայի հետ, յիշեցնելով որ Ռուսաստանի միջամտելը հարցը կարգաւորելու նպատակով՝ կը լինէր սպառնալիք ոչ միայն Եւրոպական, այլ և Ասիական Թիւրքիայի համար։

—

Կ. Պոլիս.—«Թանինը» գոհութեամբ խօսելով Բոլգարիայի համաձայնութեան մասին Թիւրքիայի հետ անմիջական բանակցութիւն վարելու համար՝ յոյս ունի, որ բանակցութիւնները բաւարար վախճանի կը յանգեն։ «Թանինի» տեսակետով, Ցունաստանը, նախատեսելով որ Թիւրքիայի և Բոլգարիայի միջև կարող է համաձայնութիւն կայանալ, պակսեցրել է իր չափազանցացրած պահանջները, որպէս զի հնարաւորութիւն ունենայ շուտով խաղաղութեան դաշն կնքել Թիւրքիայի հետ։

Օսմանեան գործակալութիւնը հաղորդում է, որ Դիմիտրիչինայի բնակիչների ու բոլգարների միջև տեղի ունեցած կատաղի կռիւից յետոյ՝ վերջիններս փախան։ Դիմիտրիչինայի ազգաբնակութիւնը լիակատար տէր դարձաւ քաղաքին։

Նոր բոլգարօ-թիւրքական սահմանը կը սկսվի Մուսթաֆա-փաշայից հիւսիս և կանցնի Մարիցայի հոսանքով։ Ադրիանուպոլիսը, Դիպօտիկան և Օրթաքէօյը կը մնան թիւրքերին։

—

Բելգրադ.—Կաբինէտը մնում է մինչև սկուպշչինայի գումարվելը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

—

Կիրակի, օգոստոսի 18-ին, Թիֆլիսում տեղի ունեցաւ հանգուցեալ հայ գրականագէտ Գէորգ Բարխուդարեանի յուղարկաւորութիւնը և թաղումը։

Հանգուցեալի մարմինը մտերիմների և յարգողների ուղեկցութեամբ տեղափոխվեց հանգուցեալի ընակարանից դէպի Վանքի մայր եկեղեցին։

Պատարագին ներկայ էին Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս, հայ լրագիրների ներկայացուցիչներ, Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան կողմից վարչութեան անդամ իշխան Ն. Արղութեան-Երկայնաբազուկ, Ներսիսեան դպրոցի և մի քանի հասատատութիւնների երկայացուցիչներ։ Իսկ առ հասարակ պէտք է նկատել, որ գրական շրջաններից քիչ էին ներկայացուցիչներ թէ ամառվայ շոգերի պատճառով և թէ հանգուցեալի անակնկալ մահվան առիթով։

Պատարագից յետոյ հանգուցեալի մարմինը դուրս բերվեց դէպի Վանքի տաճարի բակը, որտեղ կատարվեց հոգեհանգիստ։

Այդտեղ «Մշակի» խմբագիր Ա. Քալանթար արտասանեց դամբանական մի ճառ, որտեղ բնորոշեց հանգուցեալի դէմքը և գործունէութիւնը։

Այնուհետև մարմինը տարվեց Վերայի գերեզմանատուն, ուր յանձնվեց հողին։

Գէորգ Բարխուդարեանի յիշատակը արժանաւոր կերպով կը յարգվի, անշուշտ, առաջիկայ ձմեռվայ ընթացքում յատուկ գրական երեկոյթներում, նուիրված նրա գրական գործունէութեան։

—

Ա. Քալանթարի ճառի համառօտութիւնը

Այսօր հրաժեշտ ենք տալիս Գէորգ Բարխուդարեանին, մեր գրականութեան աչքի ընկնող աշխատաւորներից մէկին։

Գէորգ Բարխուդարեանը աւելի քան կէս դար է գործել հայ գրական ասպարէզում, առաջնակարգ տեղ բռնելով իբրև եւրոպական կլասիքների թարգմանիչ։

Եթէ Մխիթարեանները ծառայութիւն են մատուցել հայ գրականութեանը՝ տալով հին յունական և հռոմէական գրականութեան այնպիսի գանձեր, ինչպէս են «Իլիականը», «Ոդիսականը», «Ենէականը» և այլն, Գէորգ Բարխուդարեանը ձեռնարկել է թարգմանելու եւրոպական գրականութեան այնպիսի լուսաւոր աստղերի գրուածքները, ինչպէս են Շիլլերը և Գէօթէն։

Շնորհիւ Բարխուդարեանի՝ Շիլլերը դարձաւ ընտանի՝ հայ գրականութեան համար։ Հայ հասարակութիւնը սիրեց գերմանական ականաւոր բանաստեղծին, ինչպէս իր հարազատին։

Եւ եթէ ճիշդ է, որ Շիլլերի նման հանճարները համաշխարհային են և պատկանում են բոլոր ազգերին հաւասարապէս, ապա պէտք է արձանագրել, որ Գէորգ Բարխուդարեանը նպաստեց ժողովրդականացնելու եւրոպական այդ համակրելի բանաստեղծին հայութեան մէջ և տարածելու հայ ժողովրդի մէջ այն գաղափարները և զգացումները, որոնք այնքան առատօրէն ցայտում են Շիլլերի աքանչելի քնարից՝ ազնուութիւն, անձնուիրութիւն, շտապութիւն, բողոք բռնութեան և անիրաւութեան դէմ, անհուն հաւատ դէպի իդէալների մարմնացումը և հասարակական տենչերի իրականացումը։

Բարխուդարեանը գործեց և իբրև մանկավարժական գործող, աշխատեց թէ Թիֆլիսում և թէ գաւառում, փորձեց իր գրիչը ինքնուրոյն պիէսների, ոտանաւորների և ազատ գրուածքների մէջ, բայց նրա գլխաւոր երախտիքը այն թարգմանութիւններն են, որ նա տուել է հայ նորագոյն գրականութեան։

Նա տուեց եւրոպական նորագոյն քաղաքակրթութեան նշանաւոր գրականագէտների երկասիրութիւնների թարգմանութիւնները մաքուր, հանրամատչելի աշխարհաբար լեզուով, համակված գերմանական բանաստեղծների ներքին ոգեորութեամբ, վերապրելով այն զգացմունքները, որոնցով երկնել և ստեղծագործել են հեղինակները իրանց անմոռանալի երկերը։

Եթէ հին դարում մեր թարգմանիչները բացի ս. Գրքից տուին և ժամանակակից յոյն և լատին գրականութեան կոթողների թարգմանութիւնները, Բարխուդարեանն էլ թարգմանիչ էր նորագոյն համաշխարհային գրականութեան գեղեցիկ գործերի։ Եւ հայ ազգը չի մոռանայ Բարխուդարեանի հոյակապ գործը, որը կապեց հայ գրագէտ հասարակութիւնը եւրոպական հանճարների հետ։

Գնա յաւիտենականութեան գիրկը, թանգագին գործի ներկայացուցիչ, բայց և հաւատի եղիր, որ յաւիտենական է և այն գեղեցիկ գործը, որը տուիր հայրենի գրականութեան։

ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԻՑ

I

Ցունիսի 9-ից Պետերբուրգում բացվեց «Համառուսական առողջապահական ցուցահանդէսը»։ Այդ ցուցահանդէսը տեղաւորված էր Պետրովսկի պարկի ամենագեղեցիկ մասերից մէկում և դրաւում էր օրական հազարաւոր երկսեռ ինտելիգենտ հասարակութիւն։ Ցուցահանդէսի այլ և այլ մասերում կարդացվեցին դասախօսութիւններ, տրվեցին հարկաւոր բացատրութիւններ, փորձնական ցուցմունքներ, կատարվեցին պօրաքի վարժութիւններ, նուագում էին զեղեցիկ երաժշտութիւն և այլն, և այլն։ Ցուցահանդէսի իւրաքանչիւր բաժինը գեղեցիկ էր, հետաքրքրական, գրաւիչ, մաքուր և առողջապահական։ Իւրաքանչիւր մանագէտ իր սիրած մասնագիտութեան վերաբերեալ անպայման առողջապահական մի շարք նորութիւններ էր գտնում այնտեղ։ Մանկավարժը մի շարք «ШКОЛЬН. ГИГІЕНА» պավիլիօններում տեսնում էր գիտութեան վերջին դպրոցական առողջապահութեան անհրաժեշտ ցուցմունքները, տեսնում էր դիտողական մատեմատիկայի, մանկական ձեռարուեստների, գիմնաստիկայի և առհասարակ ֆիզիկական դաստիարակութեան վերաբերեալ այնպիսի նորութիւններ ու ճիւղեր, որոնք հայկական դպրոցներում անպայման շայլութիւններ ու աւելորդութիւններ կը նկատվին։ Մինչդեռ բոլոր նորութիւններն էլ մէկը միւսից հետաքրքրական, մէկը միւսից գեղեցիկ, օգտակար և նպատակայարմար էին։ Բայց ինչ ասել կուզէ, ցուցահանդէսը լինելով զուտ առողջապահական՝ ամեն ինչ առողջապահութեան շուրջ էը պտտվում։ Բոլոր պավիլիօնների մէջ առանձնապէս աչքի էր ընկնում «ընդհանուր զեմստվային պավիլիօնը»։ Եւ ի զուր չէ եղել, որ Դրէզդէնի առողջապահական ցուցահանդէսում գերմանացիք, տեսնելով ռուսական այդ պավիլիօնը, իրանց զարմանքն են յայտնել «բարբարոս» կարծված ռուսական կուլտուրայի այդ աստիճան անսպասելի զարգացման վրա։

Ցուցահանդէսի այս մասում՝ միւս շատ բաժինների նման ամեն ինչ չոր ու ցամաք մօդէլների վրա չէր հիմնված, այլ՝ կենդանի կերպով առաջ էին բերված զեմստվային իդէալիստ բժշկի լաբօրատորիան, ախտահանական կամերան, զեմստվային հիւանդանոցի վիրաբուժարանը, հիւանդանոցի կանալիզացիան, տեխնիկական բոլոր սարքերը և այլն, և այլն։ Մի խօսքով՝ ռուսական զեմստվային լաւագոյն գործիչները և բժիշկները ադմինիստրացիայի կամայականից միանգամայն ազատ՝ յամառ ինքնուրոյնութեամբ բժշկա-սանիտարական մասը մի իդէալական զարգացման են հասցրել։

Աւելորդ չեմ համարում այստեղ առաջ բերել մի քանի վարակիչ հիւանդութիւնների վիճակագրութիւնը, որոնք վերաբերում են և Անդրկովկասի հայաբնակ նահանգներին և շրջաններին։ Ափսոս միայն, որ այդ չափազանց շահեկան վիճակագրութիւնները ըստ ազգութիւնների չէին կազմված, այլ՝ ըստ նահանգների։ Վիճակագրական քարտէզները ըստ մեծի մասին կազմված էին պայմանական գոյներով և կրում էին «Եւրոպական Ռուսաստանի 50 նահանգների և Կովկասի (այս կամ այն հիւանդութեան) վիճակագրութիւնը» և վերաբերում էին 1908—1910 թւերին 10,000 բնակչութեան վրա հաշուած։

1) Տրախօմա

5,6-ից էլ ցած՝	Բուքայիսի նահանգում
5,6 – 22,5	Գանձակի և Թիֆլիսի նահանգներում
22,5 — 39,5	Կարսի շրջանում
39,5 – 50,8	Հիւսիսային Կովկասում
50,8 — 62,1	Բագուի նահանգում
62,1 — 73,5	Ռուսաստանի այլ և այլ մասերում։
73,5 — 90,4	
90,4 — 107,4	
107,4-ից էլ բարձր տարածված է Երևանի նահանգում և Խերսոնում։	

2) Մալիարիա

23,2-ից էլ ցած՝	Արևմտեան և Հիւսիսային Ռուսաստանում
23,2 — 92,7	Կարսի շրջանում
92,7 — 162,2	Ռուսաստանի մնացեալ նահանգների վրա է բաժանված։
162,2 — 208,5	
208,5 — 254,8	
254,8 — 301,2	
301,2 — 370,7	
370,7 – 440,2	
440,2-ից էլ բարձր տարածված է ամբողջ Կովկասում, բացի Կարսի շրջանից։	

Մնվածների և մեռնողների վիճակագրութիւնը հաղարի վրա։

3) Ծնվածներ

22,0 — 29,4	Բուքայիսի, Բագուի, Գանձակի նահանգներում, Դաղստանի շրջանում և Արևմտեան Ռուսաստանի նահանգներում։
29,4 — 36,5	Թիֆլիսի նահանգում
36,5 — 44,4	Երևանի նահանգում և Կարսի շրջանում
44,4 — 52,0	Միջին Ռուսաստանի նահանգներում
52,0 — 59,5	Արևելեան Ռուսաստանի նահանգները մինչև Աստրախանը։

4) Մեռնողներ

15,5 — 20,7	Բուքայիսի, Թիֆլիսի, Բագուի, Գանձակի նահանգներում, Դաղստանի շրջանը և Արևմտեան Ռուսաստանի նահանգներում։
20,7 — 25,9	Ռուսաստանի նահանգներում
25,9 — 31,9	Երևանի նահանգում և Կարսի շրջանում
31,9 — 36,6	Արևելեան Ռուսաստանի նահանգները մինչև Տերբեքի շրջանը։
36,6 — 61,9	

Սարսափելի են երեխաների մահացութեան դէպքերը մանաւանդ մեզ՝ հայերիս համար, Ո՞վ կարող էր երևակայել, որ համայն Ռուսաստանում, ռուսներից յետոյ, վիճակագրական գունաւոր քարտէզի վրա, երեխաների մահացութեան դէպքերը յակսնէ յանուանէ հայերիս են բաժին ընկնում, իսկ հայերից յետոյ նոր մահմեդականներին, հրէաներին, կաթոլիկներին, բողոքականներին և այն և այլն։ Հայերիս մէջ շատ են մեռնում մանաւանդ մինչև 5 տարեկան երեխաները։

1912 թ. Ռուսաստանում ծնվել է 7 միլիոն երեխայ։ Մանկաբարձուհիների թիւը հասել է 14,000-ի։ Միջին թւով եթէ ամեն մի մանկաբարձուհի տարեկան կարողանայ ընդունել 50 նորածին, այն ժամանակ կունենանք մանկաբարձուհիների առողջապահական հսկողութեամբ ազատված 700,000 երեխայ, իսկ մնացեալ 6,300,000 երեխան ճակատագրի անողոք քմահաճոյքներին է ենթարկվում, որի հետևանքը ահա Ռուսաստանի ներկայ ցաւալի նորածինների կատորածն է (ի հարկէ երեխաների մահացութեան համար կան և ուրիշ հակառողջապահական և սոցիալական պայմաններ). ցաւալի է մանաւանդ հայ իրականութիւնը, որ Ռուսաստանի համեմատական չափովն անգամ մանկաբարձուհիներ չունի։ Այս քանի տարի ուր են գնում մեր գեղեցիկ սեռի ուսման և իդէալի սիրահարները։ Ինչու՞ այդ գեղեցիկ ասպարէզի վրա այնքան քիչ են երևում, մի ասպարէզ՝ որ թէ իդէալական է և թէ ազատ ու ինքնուրոյն պրոֆէսիա, և յամենայն դէպս ամեն տեսակ կամայականութիւններից ու հայկական - բզբզոցներից աւելի ազատ՝ քան ուսուցչուհութիւնը։

Ըստ վիճակագրութեան Իրլանդիայում 1000 ծնունդի ընկնում է 160 մահացութեան դէպք, Նորվէգիայում՝ 180, Ֆրանսիայում և Անգլիայում՝ 250, իսկ յետոյ խոշոր թռիչքով յանկարծ մեր առաջն է ցցվում Ռուսաստանը՝ իր 420 մահացութեան դէպքով։

Ամուսնութիւնք (1900 – 1904) 1000-ի վրա

Մահմեդ.	ուղղափ.	հրէաներ.	կաթոլ.	բողոք.
22,1	17,8	14,2	13,9	13,5

Դժբաղդաբար այս բաժնում յայտնի չե-

ԴՈԿՈՅՎՈՐԴՈՅ

Մարդկությունը դեռևս չի հասկացել, թե ինչպես պետք է ապրի։ Նա ունի գիտություն, արվեստ, տեխնիկա, բայց չունի իմաստություն։ Նա գիտի, թե ինչպես սպանի, բայց չգիտի, թե ինչպես ապրեցնի։ Նա գիտի, թե ինչպես հարստանա, բայց չգիտի, թե ինչպես դարձնի մարդկանց երջանիկ։ Նա գիտի, թե ինչպես կռվի, բայց չգիտի, թե ինչպես հաշտեցնի։ Նա գիտի, թե ինչպես ապրի հազար տարի, բայց չգիտի, թե ինչպես ապրի մի օր։

հայութեան հետ ի մօտոյ ծանօթանալու նպատակով։ Մէօթէմէտեանը շուտով կը մեկնի Էջմիածին՝ ներկայ լինելու այս օրերս տեղի ունենալիք եպիսկոպոսական ձեռնադրութիւններին, և ապա վերադառնալով Թիֆլիս՝ կը մեկնի Եգիպտոս։

◆ Օգոստոսի 17-ին Կարսում տեղի է ունեցել մեղուապահութեան ցուցահանդէս։ Էքսպերտային յանձնաժողովը, բաղկացած Կովկասեան Մեղուապահական Ընկերութեան կողմից Կ. Գօրբաչէվից, Գ. Սունդուկեանից և Մ. Խանզադեանցի և էքսպօնատների կողմից Ս. Ղազարեանից և Յարութիւն Յարութիւնեանից 6 հոգու պարգևատրել է 6 արծաթէ մեծ մէդալով, 3 հոգու փոքր մէդալով, մրցական մէդալներ 6 հոգու։ Առաջնակարգ պարգևներ ստացել են Տիգրան Օսիպովիչ Ասլանեան, Աւագ Յարութիւնովիչ Յարութիւնեան, Պաւել Գուրգենովիչ Դուխբօրով որդիներով, Ստեփան Աշոտովիչ Ղազարեան, Կարապետ Մկրտիչովիչ Ղարակոյումեան և եղբ. Թօքմաջեանները։ Կովկասի շերամապահական կայարանը և Ա. Դիւմայի մեղուանոցը էքսպօնատներ ցուցադրել են մրցութիւնից դուրս, ուստի արժանացել են յատուկ շնորհակալութեան։

◆ Թիֆլիս է եկել Պետական Դումայի անդամ Ն. Ս. Զիբէիձէն։

◆ Կովկասի մալիարիային կայարանը մօտ օրերս իր էքսպօնատները ուղարկում է Պետերբուրգի համառուսական առողջապահական ցուցահանդէսը։ Ցուցադրելու իրերի հետ միասին գնում է այնտեղ նաև կայարանի կառավարիչ բժ. Երօֆէեվը։

◆ Թիֆլիսում պօստ-հեռագրական նոր շէնք կառուցանելու համար նախահաշիւ է կազմված և ուղարկված պօստային գլխաւոր վարչութեանը 694,000 ռուբլի։ Այդ գումարի յատկացման օրինագիծը կառաջարկվի օրէնսդրական հիմնարկութիւններին ի հաստատութիւն առաջիկայ աշնան նստաշրջանում, իսկ շէնքի կառուցումը կը սկսվի եկող տարի ամառվայ սկիզբներին։

◆ Թիֆլիսի առևտրականների բանկը բանակցութիւն է սկսել տանտերերուհի Խարազովայի հետ՝ վերջինիս պատկանող տունը, որ գտնվում է Երևանեան հրապարակի վրա, բանկին վաճառելու համար։ Բանկը մտադիր է գնել տունը 450,000 ռուբլով, բոլորովին քանդել և նոր շէնք շինել։ Խարազովան իր տունը գնահատում է 500,000 ռուբլի։

◆ Քաղաքային վարչութիւնը շաբաթով պարտաւորում է «Թիֆլիսի կրուժօքի» ձմեռային շինութեան նոր նախագիծը, 9 ինժենէրներից ու տեխնիկներից կազմված յանձնաժողովի ցուցմունքների համաձայն, ներկայացնելու ի հաստատութիւն։ Հաստատվելուց յետոյ՝ վերաբնութեան աշխատանքները կը կատարվեն գիշեր ու ցերեկ այն հաշվով, որպէսզի հոկտեմբերի 20-ին պատրաստ լինի շէնքը կրուժօքի համար։

◆ Փոխարքայի պաշտօնատարի կողմից նշանակված յատուկ մասնաժողովը իր եզրակացութիւնները ներկայացրել է փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Վատացիին, իսկ պատճէնն ուղարկել է քաղաքային վարչութեանը։ Մասնաժողովը եկել է այն եզրակացութեան, որ կարելի է թողնել ներքնայարկը (նկուղային մասը) և հիմքերը իբրև մատնելի։ Պատերից թողնել կարելի է այնպիսիները միայն, որոնք կը դիմանան մի յայտնի ծանրութեան. օրինակ՝ քառասուն մասում քառ. դիւյմը 1,5 պուդի, իսկ միջին պատի իւրաքանչիւր քառ. դիւյմը 2 պուդի։

◆ «Բօսֆոր» տպատառագրական ընկերութիւնը Թիֆլիսում որոշել է կառուցանել սեփական շէնք, ուստի այդ նպատակով բանակցութիւններ է վարում քաղաքի կենտրոնական մասի տնատէրերից մի քանիսի հետ՝ նրանցից մէկն ու մէկի տունը գնելու համար։

◆ Սեպտեմբերի վերջերին Թիֆլիսի այգեգործական դպրոցին կից բացվելու են կալիֆօրնիական եղանակով մրգեղէններ չոր բացնելու դաշնութացքներ։ Դաշնութացքները դեկավարելու է յատուկ մասնագէտ Կրիշտաֆովիչը։

◆ Կովկասեան դեղօրայքի ապրանքներով առևտուր անող ընկերութիւնը Օլգինսկայա փողոցի վրա Մելիք-Ազարեանցի նորակառոյց շէնքի մէջ սեպտեմբերից բանում է իր բաժանմունքը։

◆ Ի կատարումն զումայի որոշման՝ քաղաքային վարչութիւնը միջնորդութիւն է դրել թեցրել ուր հարկն է՝ Թիֆլիսի էլեքտրաքարշը գնելու մասին։

◆ Կովկասեան օֆիցէրների էկոնոմիական ընկերութիւնը իր բաժանմունքն է բացել Հալաբարում Կախէթինսկայա փողոցի վրա։

◆ «Закавказье» և «Закавк. Рѣчь» լրագիրների ասելով, լուր է պտտում, որ Օլգինսկայա փողոցի վրա Մելիք-Ազարեանի նորակառոյց տան երկաթէ գերանները ծռվել են և պատերը ճեղքվել, այնպէս որ՝ վտանգ է սպառնում կենտրոնների։ Մեր հարգած ճշգրիտ տեղեկութիւնների հիման վրա կարող ենք հաղորդել, որ այդ տարածված լուրը ոչ մի հիմք չունի։

◆ Օգոստոսի 19-ին, երեկոյեան ժամը 9-ին, Նորէյսկայա վերելքում Լանդօվային պատկանող № 5 տանը անյայտ պատճառից անագին հրդեհ ծագեց և լափեց եռյարկանի տունը։ Հրդեհը անցաւ նաև հարևան Երուանդ Յարութիւնեանի տանը և ոչնչացրեց տանիքը։ Լանդօվայի տուն ապահովագրված է «Բօսֆոր» ընկերութեան մէջ 17,500 ռուբլով։ Յարութիւնեանի վնասը ստուգել անհնարին եղաւ, որովհետև տանտէրը բացակայում է քաղաքից։ Հրդեհը հանգցրել է հրդեհաշէջ խումբը։ Մարդկանց հետ որևէ դժբաղդութիւն չէ պատահել, բացի հրդեհաշէջներից մէկից՝ Տիմոֆէյ Լուկիանովիչ Մարգունովից, որին դիպել է ընկնող սիներից մէկը և վիրաւորել։ Մարգունովին ուղարկել են Միքայէլեան հիւանդանոցը բժշկվելու։

◆ Օգոստոսի 19-ին, երեկոյեան ժամը 5-ին, Գաբրիել Գինէբրին պատկանող № 70 աւտոմոբիլը, որը վարում էր ինքը սեփականատէրը, Լերմոնտովսկայա և Դանովսկայա փողոցների անկիւնում այնպիսի ոյժով կպաւ № 334 կառքին, որ հարուածից կտրվեց ձիանոցերից մէկի եաւի ոտքը։

◆ Գօրու գաւառի Ախալքալաք գիւղից մեզ տեղեկացնում են, որ այնտեղ կիրակի, օգ. 18-ին, հայոց եկեղեցում տեղական ծխատէր քահանայ տէր-Յարութիւն Մելիք-մանեանը յիշեալ գիւղում գտնվող Ս. Եսայեանի, Յ. Աբաղեանի և այլոց խնդիրքով կատարեց հանդիսաւոր հոգեհանգիստ Գէորգ Բարխուդարեանի յիշատակին։ Հոգեհանգիստին ներկայ էր մեծ բազմութիւն ամբարնոցաւորների, որոնցից շատերը հանգուցեալին աշակերտել են։ Ներկայ էր և ծերունի տէր-Յովհաննէս աւագ քահանան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Դիլիջան, 17 օգոստոսի

Ղ. Աղայեանի անուան և յիշատակին կառուցվող Դիլիջանի ժողովրդական տունը, գր.-ընթերցարանն արդէն աւարտված և բացված է հանդիսաւորապէս։ Ժողովրդական լուսաւորութեան և կուլտուրական այդ մեծ գործին նպաստել են ներկայ 1913 թ. յունվարի 1-ից ցայսօր Ս. Յարութիւնեանի միջոցով հետևեալ անձինք.

Պ. Մ. Ղուկասեան 200 ր., տ. տ. Զաւրեան, Վ. Թարմշեան, եղբ. Մելրոյեան, պ. պ. Ղորդանեան, Հ. Ադամեան՝ 100-ական ր., Ղուկասեանի կտակակատար պ. պ. Խունտնց և Ս. Ադամեան 50-ական ր. և տին 20 ր.։

Սրտաբուղխ շնորհակալութիւն նաև այն բոլոր անձանց և պ. Ս. Յարութիւնեանին, որոնք նիւթական և բարոյական ջանք ու կարող չը խնայեցին՝ նպաստելու այն վեհ գործին, որի արգասիքն այսօր դառնում է ժողովրդական հասարակական սեփականութիւն։

Կ. Հ. Բ. Ընկ. Դիլիջանի ճիւղի նախագահ՝ Աւետիս Տէր-Օհանեանց
Անդամ-քարտուղար՝ Ա. Կոծինեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Կ. Պոլսի թերթերը հաղորդում են, որ Կիլիկիայի Ադանա թեմի գաւառական ժողովը՝ հրաժարված առաջնորդ Շահէ վարդապետի տեղ այդ թեմի առաջնորդ է ընտրել Դաղատիայի (Էնկիւրիայի) առաջնորդ Բաբգէն եպիսկոպոս Կիւլէսէրեանին, միաձայն։ Գաւառական ժողովի երեսփոխանների թիւն է 28, որոնցից 25-ը ներկայ են եղել ժողովին։

◆ Պետական Դումայի կադէտական ֆրակցիայից ձախակողմեան և աջակողմեան պատգամաւորները վրդովված են սերը կառավարութեան դէպի Մելիքովը ցոյց տուած վերաբերմունքի դէմ։ Նրանք առաջարկութիւն կանեն Դումային, որ անհրաժեշտ է այդ միջադէպի առիթով արտայայտվել՝ պախարակելով սերը կառավարութեանը։

◆ Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Պետական Դումայի աշխատաւորականներն ու սոցիալ-դեմոկրատները աշնանը Պետական Դումայում հարցապնդում են անելու Բաղուի գործադուլի առիթով։

◆ Պետութիւնները համաձայնութիւն են կայացրել այլանական գահը վերապահելու բուլգարական թագուհու եղբօրորդուն՝ պրինց Վիլհելմին։

◆ «Ռուս ժողովրդի միութիւնը» միջնորդութիւն է յարուցել, որպէսզի թոյլ տան միութեան բոլոր անդամներին տարձանակներ կրելու։ «Рѣчь» լրագիրը, հաղորդելով այդ լուրը, հարց է տալիս. «Ո՞ր թշնամու դէմ է»։

◆ Վլադիկավկազից հաղորդում են «Пріазовск. Кр.» լրագրին, որ Բալխանսկիի կիրճի 1000 լեռնականներ յարձակում են գործել Ժանիսշօլի դաստակերտի վրա ու կողոպտել։ Յարձակման պատճառը ագրարական թիւրիմացութիւններն են։ Զինուորական պատժիչ զօրախումբ է ուղարկված ջարդարարների դէմ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)
17 օգոստոսի

ՕԴԵՍՍԱ։ Քաղաքապետի նախագահութեամբ տեղի ունեցաւ խորհրդակցութիւն միջոցներ ձեռք առնելու Ռումինիայից խօլերայի մուտքը Օդեսսա խափանելու համար։ Անհրաժեշտ են համարվել բժշկական հսկողութիւն նշանակել Դանուբի նաւահանգիստներից եկող ճանապարհորդների ու ապրանքների վրա, նոյնպէս և վերակոչել սանիտարական հոդաբարձութիւնները գործելու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է օրէնք՝ պետական գանձարանից գումարներ բաց թողնելու մասին եկեղեցական ծխական դպրոցների ուսուցիչների ռոճիկը աւելացնելու նպատակով։

Գրաւված են «Сѣверная Правда»-ի № 13-ը և «Живая Мысль»-ի № 1-ը։

ՎԱՐՇԱՒ։ Տեղի ունեցաւ լեհական պատմական Եաբլօնովսկիի հանդիսաւոր թաղումը։

ԿԻԵՎ։ Սկսվեց օգոստոսի 20-ին բացվելիք հարաւուսական առաջին օլիմպիական խաղերին մասնակցողների գալուստը։ Անդամագրվել են 400-ից աւելի։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ։ Փակվեց միջազգային քրէական դէպքերի կոնգրէսը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Զինուորական տեսչութեան ձեռնարկած մրցանակին մասնակցելու են 13 աէրոպլաններ ռուսական և արտասահմանեան սիստեմներին վճռված է միաժամանակ աէրոպլանների մրցութիւն նշանակել ռումբեր նետելու և անթել հեռագրելու համար։

15 օգոստոսի

ՐԻԳԱ։ Կին Զվէրեվան քիչ բարձրութիւնից ընկաւ իր աէրոպլանով։ Գործիքը կտրվեցաւ։ Ինքը օգաչուն թեթև ցնցումներ ստացաւ։

ԿՕՎՆԱ։ Շավէլեան գաւառում գործող աւազակախմբի պարագլուխ Պացիկը սպանվել է գիշերը Սարօ-Պոնէվէժում իբրև հետապնդող պահակներից։ Հրացանաձգութեան ժամանակ վիրաւորվել են մի պահակ և մի քաղաքացի։

ԼՕԶ։ Կրուշէնդոլին ընկերութեան մանուֆակտուրային գործարանում՝ Պաբիցանիցում գործադուլարար 4000 բանուորներից 1600 հոգի վերսկսել են աշխատանքները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խերսօնը յայտարարվում է վտանգաւոր խօլերայի կողմից։ Օգոստոսի 13-ին և 15-ին տեղի են ունեցել խօլերայով հիւանդանալու 3 դէպքեր, որոնցից 2-ը մեռել են։ Բարձրագոյնս շնորհակալութիւն է յայտնված 12-րդ զօրաբանակի նախկին հրամանատար կավալերիայի գեն. Կօրդանովին։

Մօտ օրերս ձեռնարկվելու է Պետերբուրգում կառուցանելու Օգոստափառ Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնայի հովանաւորութեան ներքոյ, մայրականութեան և մանկութեան պահպանման համառուսական հոգաբարձութեան մի ինստիտուտ։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(М. 179586/179604)

Ժամանակակից գիտութեան հայեցակէտից՝ հաստատված է, որ Օդօլը ամենալաւ դեղն է ատամների և բերանի համար։

Ս. ԽԱՉ քաղաքի (Ստաւրոպոլի նահ.) ծխ. երկրագործական դպրոցի համար հարկաւոր է

Վարժապետ կամ վարժուհի

24 դասով հայերէն, կրօն, երգեցողութիւն, վայելչագրութիւն, նկարչութիւն և գործավարութիւն. ռոճիկ 500 ր.։ Ցանկացողները թող դիմեն հոգաբարձութեան՝ ուղարկելով պատշաճաւոր վկայականները։
Կ. Չ. Հ. 654. 3—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ՈՍԿԻ ԲԱՐԵԿԱՄ
ՀԱՅ ԸՆՏԱՆԵԱՑ

Զորրորդ տպագրութիւնը — էջ 1414. պատկերներ 334. բովանդակութիւնը հարստացրած է ատաղաբաշխական, բազմակերպ գուշակողական, երկրագործական, անհիւթական, երազագիտական, հիպնոտիզմական, տոմարական, փիլիսոփայական, աստուածաբանական, պատմական, ժամանակագրական, տեղագրական, բարեկարգչական, իմաստասիրական, դուրանական, մեղուաբուծական, շերամապահական, տարբրանական, հանքաբանական, արհեստաբանական, առողջապահական, բժշկական, անասնաբուժական, մեկնաբանական, զուարճաբանական հետաքրքրական, զմուռաբրական, ժառանգական, աշխարհագրական, ծննդաբերական, և այլ և այլ բազմաթիւ և ընտիր և շատ պէտքական նիւթերով. այլ և վիճակարկութեան աղթարքի նշան ձգելու գիտութիւններով և էսպերանտոյի քերականութեամբ։

ԳԻՆԸ 5 ՐՈՒԲԼԻ

Ճանապարհածախսով 6 ռուբլի. զիջումն միմիայն գումարով գնողներին. չի ուղարկվում վերադիր վճարողներին։

Հասցէն Թիֆլիս՝ «Գրիգոր ա.-ք. Մանդակունի»։
(ու. կ.) 658. 3—1

ՕԳՏՎԵՑԻՔ ԴԻՊՔԻՑ

Վաճառվում են Յ. Դաղբաշեանի բառարանների

ՎԵՐՋԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

ՌՈՒՍ-ՀԱՅ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ գինը 8 ր., կազմած 9 ր.։

ՀԱՅ-ՌՈՒՍ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌ., գինը 6 ր., կազմած 6 ր. 50 կ.։ Երկու բառարանները միասին 12 ր.։ Ճանապարհածախսը հեղինակի վրա։ Աշխարհաբարի քննական քերականութիւնը նոյն հեղինակի, գինը 50 կոպէկ։ Դիմել՝ Հ. Դաղբաշյան. Коргановская ул. № 9. кв. 2 Въ г. Тифлисъ.
(Հ.) 494. 10—8

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

ծխական դպրոցների համար հարկաւոր են

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՒ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ

հետևեալ առարկաների համար.
Հայոց և ռուսաց լեզուի, թւաբանութեան, հայրենագիտութեան, բնագիտութեան, երկնաչափական ձեռագրութեան, ռուսաց և ընդ. աշխարհագրութեան, ռուսաց, հայոց և ընդ. պատմութեան, քաղաք. ուսմունքի և առողջապահութեան—20 ռուբլի դասագնով։
Կրօնի, նկարչութեան, ձեռագործի, երգեցողութեան և ձայնագրութեան 16 ր. դասագնով։

Տեսչի պաշտօնակատար

16 դ., հոգաբարձական քարտուղարութեամբ 700 ր. ռոճիկով։ Ցանկացողներին խնդրում ենք դիմել Հոգաբարձութեան գրասենեակ կամ հեռագրով մինչև ամսիս 25-ը հետևեալ հասցէով՝ Ахалкалаки, Попечительству Армянскихъ Приходскихъ Училищъ, հեռագրով՝ Ахалкалаки, Попечительству.
(Կ.Չ.) 648. 3—3

Մոսկվայի հայկական երգեցիկ խմբում բաց տեղեր կան երգիչների եւ երգչուհիների։

Ցանկացողները պէտք է դիմեն Եղիշէ Բաղդասարեանին, Լազարեան ճեմարան։
(Կ.Չ.) 652. 3—3

Ս.-Պետերբուրգի Պետական Կոնսերվատորիայի գեղարուեստական (պրոֆէսորների) խորհուրդը 1912 թ.-ի սեպտեմբերի 21-ի նիստում գրաւեցրել է մեր նոր լոյս տեսած

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ

իբրև ՕԳՏԱԿԱՐ ԴԱՍԱԳԻՐՔ փոքր ու միջին հասակաւոր սներին երգեցողութիւն դասաւանդելու։ Ծախվում է բոլոր հայ գրախանութներում։

ԳԻՆՆ Է 35 ԿՈՊԵԿ։
Ռոմանոս Մելիքեան
Ազատ Մանուկեան
659։ 8—1

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՅՕԳՈՒՏ „ՄՇԱԿԻ" ՖՕՆԴԻ

հետևեալ գրքերը.
1) «ՄՇԱԿ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) «ՄՇԱԿԻ» ՔԱՌԱՄԱՄԵԱԿԸ կազմեց Լ. Դանիէլեան » — 50 կ.
3) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ » — 30 կ.
4) ԿԱՑԷՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Աւ. Առաքելեանի » — 50 կ.
5) ՔԱՌԱՄԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յօբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ) . . . 1 ր.
6) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1 ր.
Վերոյիշեալ հրատարակութիւններից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։
(2) 10—8

ԱՄԽԱԲԱԴԻ հայոց դպրոցի հոգաբարձութիւնը հրաւիրում է մի աւագ-ուսուցիչ փոր-ձառու մանկավարժ՝ հայերէնի 20 դասով։ Ռոճիկը 900 ր. մի ուսուցիչ ռուսերէնի համար, մի ուսուցիչ ցանկալի է ուսուցչ. ինստիտուտն աւարտած 24 դաս. մի թւաբանութեան ուսուցիչ 18 և երկրաչափութեան 6 դաս. մի նկարչութեան ուսուցիչ կրօնի, հայերէնի, վայելչագրութեան համար 20 դաս։ Դասագինն է բոլորին 30 ր.։ Բացի դրանից հրաւիրվում մի ուսուցիչ ևս երգեցողութեան 8 դասի համար վերջինս պատրաստելու է նաև երգեցիկ խումբ եկեղեցում երգելու համար և վարելու է վերակացուի պաշտօն. ռոճիկը 720 ռուբլի։
Ցէնզային տեղեկութիւնները հաղորդել հեռագրով։
662. 3—1

ՆՈՒԽՈՒ

հայոց երկդասեան դպրոցի համար հարկաւոր են միջնակարգ կրթութեամբ

ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ

մէկը 24 դասով ռուսաց լեզուի, ռուսաց պատմութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան համար (առաւելութիւն տրվելու է փորձված սեմինարիաւարտին), միւսը 22 դասով հայոց լեզուի, հայրենագիտութեան, հայոց և ընդհանուր պատմութեան համար։

Պայմանների մասին դիմել Հոգաբարձութեան՝ Нуха, Попечительству Армянскаго Училища.
(Կ.Չ.) 646. 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ
հրատարակութեամբ
Մ. ԱԲԵՂԵԱՆԻ, Ա. ԱԲԵՂԵԱՆԻ և Մ. ՄԱՏԷՆՃԵԱՆԻ կազմած

ԳՐԱԳԷՏ

Ուղղագրական ձեռնարկի (ուղղագրական ՁԵՌԱԳԻՐ օրինակներ) առաջին գրքոյկը։ Կովկասի ուսումնար. շրջանի հոգաբարձուի կողմից թոյլատրված է որպէս դասարանական ձեռնարկ պետական դպրոցների համար։
Գինն է 25 կոպէկ։
Լոյս են տեսել նաև՝ «ԳՐԱԳԷՏ», Բ. գրքոյկը, գինը 25 կ., Գ. գրքոյկը, գինը 30 կոպ.։
Դիմել՝ Թիֆլիս, «Գիր» և միւս գրախանութներին։
(Չ.Հ.) 657. 4—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԱՐՇ. ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ, ՏԻԳ. ՌԱՇՄԱՃԵԱՆԻ և Ա.Հ. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ կազմած

ԴԱՍԱԼՆԿԵՐ

1) Առաջին տարի, դունաւոր պատկերներով, 5-րդ տիպ բարեփոխված . . . 40 կ.
2) Երկրորդ տարի, 4-րդ տիպ բարեփոխված . . . 50 կ.
3) Երրորդ տարի 3-րդ տիպ բարեփոխված . . . 60 կ.
4) Զորրորդ տարի . . . 70 կ.

ԴԱՍԱԼՆԿԵՐՆԵՐԸ թոյլատրված են Օդեսսայի ուսումնարանական շրջանի հոգաբարձական խորհրդի կողմից որպէս դասագիրք։
Ա. տարվայ Այբբենարան տպվում է ամբողջովին ձեռագրով—բացի դրանից նոր մտցված են դասերի հետ կապ ունեցող նկարչական, պարզ գծերով զարդացրած պատկերներ։
Բոլոր տարիներն ունեն արտագրութեան համար բազմաթիւ ձեռագիր յօդուածներ՝ հիմնված ուղղագրական կանոնների վրա։
Երրորդ և չորրորդ տարիների մէջ կան բազմաթիւ ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ՁԵՒԱՓՈԽԵՐՈՒՄՆԵՐ ՎՂՂ ՊԱՏԿԵՐՆԵՐ։
Դիմել՝ Թիֆլիս «ԳԻՐ», «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ», Երևան՝ «ԱՐԱՏԱՏ» և Յովհաննիսեան գրավաճառներին և կամ կազմողներին՝ Երևանի թեմական դպրոց։
Գումարով գնողներին կը լինի զեղչ։
(Հ. Ա. Հ.) 647. 12—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный